
ԿԱՐՈՏԱԽՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

ԼԻԼԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մասնագիտական բառարաններում կարոտախտը սահմանվում է կա՛մ որպես հայրենաբաղձություն, հայրենիքի կարոտ, կա՛մ էլ պարզապես անցյալի, հիշողության մեջ մնացած իրադարձությունների նկատմամբ անձկություն, թախիծ: Կարոտախտը (nostos՝ վերադարձ տուն, և algia՝ կարոտ) հունարենից բառացի թարգմանությամբ նշանակում է այլևս գոյություն չունեցող տան նկատմամբ կարոտ, տխրություն: Այլ կերպ ասած՝ կարոտախտը մարդուն բնորոշ հուզական ապրում, վերաբերմունք և գնահատական է, որը հասցեագրված է այլևս գոյություն չունեցող, անցած-գնացած, արդեն ապրված ժամանակին, առարկային կամ երևույթին և արտահայտում է տխրություն ու այդ ամենը կրկին ունենալու, տիրապետելու անհագ ցանկություն: Այն օգնում է մարդկանց պահպանելու իրենց նույնականությունը կյանքի կարևոր և խոշոր հեղաշրջումներից, փոփոխություններից հետո: Փոփոխություններն իրենց հետ բերում են բազում անորոշություններ, որոնց պայմաններում կարոտախտը ձեռք է բերում հարմարվողականության գործառույթ: Լինելով ապրված անցյալի դրականորեն երանգավորված վերհուշ՝ կարոտախտը լի է անցյալի նկատմամբ սիրո, հաճույքի, ուրախության, երջանկության և համանման այլ դրական զգացումներով: Ինչպես նշում է հայտնի հոգեբան Ս. Բոյմը, կարոտախտն աննկատ կերպով, ինչպես վաղուց մոռացված մի բացիլ, ներթափանցել է ժամանակակից աշխարհ՝ ազգային գաղափարախոսության, քաղաքաշինության, արվեստի մեջ¹:

Չնայած հունական արմատներին՝ «nostalgia» բառը չի ծագել Անտիկ Յունաստանում: Եզրույթը ստեղծել ու առաջին անգամ իր բժշկագիտական ատենախոսության մեջ օգտագործել է (1688 թ.) շվեյցարացի ուսանող Յոհաննես Յոֆերը: Հակառակ ինտուիցիայի՝ կարոտախտի թեմատիկան գալիս է ոչ թե գրականությունից, արվեստից կամ քաղաքագիտությունից, այլ բժշկագիտությունից: Ընդ որում՝ 17-րդ դարում կարոտախտը համարվում էր հիվանդություն, որն անենաշատը տարածված էր հայրենիքից հեռու ծառայող զինվորների շրջանում և համարվում էր բուժելի օպիումի միջոցով, շվեյցարական լեռներ ճամփորդելով և այլն:

Կարոտախտի ապրումը բնորոշ է ինչպես անհատներին, այնպես էլ սոցիալական խմբերին, և այս առումով առանձնացվում են անհատական և սոցիալական կարոտախտի տեսակներ: Ընդ որում, երբ խոսքը հասարակության՝ որպես կարոտախտի սուբյեկտի, անցյալում մնացած ավան-

¹ Տե՛ս **Бойм С.** Конец ностальгии? Искусство и культурная память конца века: Случай Ильи Кабакова. «НЛО», 1999, № 39:

դույթների և սովորությունների, ինչպես նաև դրանց ցանկալի վերականգնման մասին է, որն անմիջական կապ ունի կոլեկտիվ անգիտակցական արխիտիպերի, առասպելական պատկերացումների հետ, ապա գործ ունենք սոցիալական կարոտախտ երևույթի հետ: Այս դեպքում մարդկային զանգվածները իրականությունը զնահատելիս համեմատական զուգահեռներ են անցկացնում ներկայի և անցյալի դրվագների միջև, և, որպես կանոն, այդ համեմատությունը ավարտվում է անցյալի օգտին, քանի որ հիմնված է անցյալի իդեալականացման ու ներկայի քննադատության և համընդհանուր մերժման վրա:

Անհատական կարոտախտի դեպքում անհատը թախծում է իր անցյալի, երիտասարդության, հաջողությունների, կորցրած ձեռքբերումների և կենսագրական այլ դրվագների մասին: Կարոտախտի առարկա կարող են լինել ծայնը, համը, հոտը, կոնկրետ տեսարանը, նկարը, տվյալ ժամանակին բնորոշ առարկան, խորհրդանիշը և այլն, որոնք արևմտյան գրականության մեջ անվանվում են «կարոտախտի ցուցանիշներ»²:

Կարոտախտի ուսումնասիրությամբ զբաղվում են ամենատարբեր ուղղությունում՝ գրականություն, պատմագիտություն, հոգեբանություն և այլն: Անցյալի նկատմամբ վերաբերմունքը մեկնաբանվել է ամենատարբեր իմաստներով ու նշանակությամբ, ինչի վառ վկայություններն են ասույթներն ու ժողովրդական իմաստությունները: «Նա, ով չի հիշում իր անցյալը, չունի նաև ապագա», մեկ այլ հայտնի ասույթի համաձայն՝ «Նա, ով հիշում է անցյալը, չունի մեկ աչք, իսկ ով մոռացել է՝ երկուսը»: Մարդկային էակին բնորոշ է ժամանակի մեջ ծավալվող իր գոյության և կյանքի նկատմամբ անդրադարձը: Մարդկային յուրաքանչյուր գործունեություն այս կամ այն չափով կապված է անցյալին և պայմանավորված է վերջինով: Որպեսզի համոզվենք, թե որքանով է կարևոր մեզ համար անցյալը, բավական է միայն թվարկել գիտությունների այն մեծ բազմությունը, որ զբաղվում են հենց անցյալի ուսումնասիրությամբ՝ պատմագիտություն, հնէաբանություն, մշակութաբանություն, բանասիրություն և այլն: Անցյալի մասին տեղեկատվության ապահովմամբ են զբաղված նաև ժամանակակից զանգվածային լրատվամիջոցները: Ռուս նշանավոր փիլիսոփա Ն. Բերդյաևը, փորձելով հիմնավորել, թե ինչու է մարդու համար այդքան կարևոր անցյալի ճանաչողությունը, պնդում է, որ դիմելով անցյալին՝ մենք առավել սուր ենք ապրում հավերժության զգացումը, և որ մեր պահպանած հին իրերն արտահայտում են հավերժության պաքարը ժամանակի նկատմամբ³:

Քննարկելով, թե ինչու է մարդը սիրում ճանապարհորդել անցյալում՝ Դ. Լաուենտալը շեշտը դնում է անցյալի կարոտախտից ստացվող հետևանքների, իսկ ավելի ճիշտ՝ օգուտների վրա: Ըստ նրա՝ անցյալում տեղի ունեցած իրադարձություններին դիմելը ու կրկին վերապրելը մարդուն տալիս են այնպիսի օգուտներ, ինչպիսիք են՝ ճանաչելիությունը և հասկացումը, հաստատումը և հավաստիացումը, անհատական և խմբային նույնականությունը, կա-

² Newcomb, R. M. Nostalgia index of historical landscapes in Denmark.// International Geography. Toronto, 1972.

³ См. у Бердяев Н. Философия неравенства. М., 2006, т. 2 126:

ռավարելիությունը, հարստացումը և, վերջապես, փախուստը⁴: Անցյալում է մարդը գտնում իր ներկայի հնարավոր մեկնաբանությունն ու գնահատումը, իր սեփական և խմբային ինքնությունը, կյանքի իմաստը և այլն: Այս ամենն ավելի ակնհայտ և սուր է զգացվում անցումային հասարակության պայմաններում, երբ համընդհանուր կասկածի տակ է դրվում տվյալ հասարակության գործառույթյան համար կարևոր ողջ արժեհամակարգը: Կառավարելիությունը ցույց է տալիս այն դասերի ամբողջությունը, որ տվյալ հանրությունը քաղում է իր անցյալից: Իսկ հարստությունն անցյալից ներկա թափանցած կերպարների, խորհրդանիշերի բազմազանությունն է, որով մարդը լրացնում, նորոգում և վերափոխում է իր ներկան: Մարդուն բնորոշ է նաև անձկության այնպիսի զգացումը, որը, կործանիչ ազդեցություն ունենալով մարդու հոգեկան հանգստության վրա, նրան ստիպում է հիմնովին մերժել ներկան և ապաստան գտնել անցյալի երանելի գողտրիկ անկյուններում: Այսպիսով, կարոտախտն իրենից ներկայացնում է ուտոպիա, որն ուղղված է ոչ թե ապագային, այլ անցյալին, այն փորձ է հաղթահարելու պատմության անբեկանելիությունը⁵:

Կարոտախտը հիշողություն է, սակայն յուրահատուկ հիշողություն, հատուկ տեսանկյուն և ուղղվածություն ունեցող հիշողություն: Հիշողությունը հոգեկանի այն կարևոր գործառույթն է, որը մեծ նշանակություն և ազդեցություն ունի մեր արարքների, կողմնորոշումների և նպատակների վրա: Որոշ իմաստով կարելի է ասել, որ մեր արարքները, ընկալումներն ու գնահատականները պայմանավորված են ոչ այնքան մեր ներկա զգացողություններով, որքան անցյալի մեր հուշերով:

Հիշողությունն անցյալի ոչ թե պասիվ վերարտադրություն է, այլ ակտիվ, ստեղծագործական վերակառուցում, և այս իմաստով կարոտախտը ևս անցյալի ոչ օբյեկտիվ, երևակայական յուրատեսակ վերակառուցում է: Այս հանգամանքը բացասական երանգ է հաղորդում վերջինիս և լայնորեն քննադատվում գիտական շրջանակներում: Այդ պատճառով որոշ հեղինակներ գտնում են, որ կարոտախտը կարող է լինել միայն գրականության, հոգեբանության ոլորտներում քննարկվող թեմա և չի կարող համարվել գիտական այլ բնագավառների համար լուրջ և արգասաբեր ուսումնասիրությունների նյութ: Սակայն անցյալի որոշ իրադարձությունների խեղաթյուրումը՝ որպես կարոտախտին բնորոշ հատկություն, կարող է թերություն համարվել, ասենք, պատմագիտության համար, սակայն ոչ սոցիոմշակութաբանական, բարոյագիտական ուսումնասիրությունների տեսանկյունից: Հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդն ընդհանրապես հակված է հիշելու իր հետ կապված դրական իրադարձությունները, իսկ ուրիշների հետ կապված՝ բացասական երևույթները: Ընդ որում, որպես կանոն, մարդիկ գտնում են, որ իրենց կյանքի անցած փուլերը եղել են ավելի հաջող, քան ներկան է: Այնպես որ, հիշողությանն ընդհանրապես ինչ-որ չափով բնորոշ է անձկության երանգը: Այս հանգամանքն ավելի ակնհայտ է դառնում, երբ խոսքը հայրենասիրության կամ, ավելի ճիշտ, հայրենաբաղձության մասին է:

⁴ Տե՛ս **Лоуэнталь Д.** Прошлое – чужая страна. СПб., 2004, էջ 76:

⁵ Տե՛ս **Бойм С.**, նշվ. աշխ., էջ 24:

Հայրենասիրությունն անմիջական առնչություն ունի կարոտախտի հետ: Հայրենաբաղձությունը, օրինակ, հայ հասարակության համար շատ հարազատ և տարածված ապրում է, որի հիմքերը գալիս են մեր պատմական կենսագրության մեջ հաճախ հանդիպող դժվարություններից և դրանցից բխող հետևանքներից: Հայրենիքի կորուստը, օտար տիրապետության տակ ապրելը, քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանները ստիպել են մեզ դառնալ աշխարհասփյուռ ժողովուրդ, ապրել մեր հայրենիքից դուրս կամ նրա միայն մի հատվածում: Հայրենասիրությունն առավել վառ և իր ողջ էությանը արտահայտվում է հատկապես այն պարագայում, երբ մարդը կտրված է իր հայրենիքից: Առավելապես այն մարդիկ են տոջորվում հայրենիքի սիրուց, ովքեր աքսորյալներ են կամ գաղթականներ: Ակնհայտ է, որ մեր իրականության մեջ սփյուռքահայերն ավելի հաճախ և ավելի մեծ եռանդով են խոսում հայրենիքի քաղցրության և այն պահպանելու, ծաղկեցնելու մասին, քան հայաստանաբնակ հայերը: Մեզ համար բնութագրական տեսարան է, երբ սփյուռքահայը համբուրում է հայրենի հողը, միաժամանակ դժվար է պատկերացնել հայաստանաբնակ հային՝ այդ եղանակով հայրենիքի նկատմամբ իր զգացմունքներն արտահայտելիս: Իսկ Հայաստանում բնակվող այն հայերը, որոնց արմատները գալիս են Արևմտյան Հայաստանից, իրենց կորցրած հարուստ և գեղեցիկ հայրենիքի կարոտը փարատում են հայրենակցական միություններ կազմելով, պատմական հայրենիք ճանապարհորդություններով, հայրենասիրական և ռազմական երգերի ու պարերի երեկոներ կազմակերպելով և հայրենիքի նկատմամբ սերը վառ պահելու կոչերով: Այսպիսով, հայրենիքը նման է առողջությանը, երբ մենք այն ունենք, չենք նկատում, իսկ երբ կտրված ենք հայրենիքից, մեծ տեղ և առաքելություն ենք տալիս հայրենասիրությանը կամ հայրենաբաղձությանը:

Մեր հասարակության մեջ կարոտախտի մեկ այլ երևույթ է նկատվում այն մարդկանց մոտ, ովքեր, իրենց հայրենիքը համարելով Խորհրդային Միությունը, ցանկանում են հետ բերել անցած «երանելի» կարգերը և «արդար ու երջանիկ» կյանքը: Խորհրդային պլանային տնտեսությունը, թեև չէր կարողանում հավասարապես ապահովել բոլորի բարեկեցությունը, այնուամենայնիվ մարդկանց պարզևուրեք էր հարաբերականորեն կայուն, սթրեսներից զերծ կյանք, և հետևաբար ժամանակակից մրցակցային տնտեսության ճնշման տակ մարդիկ կարոտով են հիշում այդ անխռով ժամանակները: Այս երևույթը բնորոշ է ընդհանրապես բոլոր հետխորհրդային հասարակություններին, որտեղ բնակչության մեծ մասը հակված է ընդունելու, որ մինչ սոցիալիստական կարգերի փլուզումը նրանց կյանքն ավելի լավն էր, քան դրանից հետո: Ըստ ռուսական «Yuriy Levada Analytical Centre» սոցիոլոգիական ընկերության տվյալների՝ Ռուսաստանի բնակչության 60 տոկոսը կարոտախտով է հիշում այն ժամանակները, երբ նրանք կարող էին գնել այն ամենը, ինչ տեսնում էին, ամռանը հանգստանալ Սև ծովի ափին՝ պիտերական ճամբարներում, և գնել պաղպաղակ ընդամենը յոթ կոպեկով: Սակայն Խորհրդային կարգերի փլուզումից հետո սկիզբ առած անցումային շրջանում երբեմնի կայունությանը փոխարինում են անկանխատեսելիությունը, անզորությունն ու անորոշությունը: Մարդիկ

գտնում են, որ թեև այսօր իրենք ունեն անհամեմատ շատ ավելի բան, քան նախկինում, սակայն միակ բանը, որ նրանց անհանգստացնում է, վաղվա օրվա անկանխատեսելիությունն ու դրանից բխող տագնապն է: Կապիտալիզմը և մրցակցությունը կապված են մշտական տագնապի զգացողության հետ, որը սպանում է սիրո և երազանքի ամեն մի հնարավորություն, մինչդեռ խորհրդային կարգերը յուրաքանչյուր քաղաքացու համար երաշխավորում էին նրա կյանքի կայունության համար անհրաժեշտ հիմքերը՝ բնակարան, աշխատանք, կրթություն, հանգիստ, գործուղում և այլն:

Անցումային շրջանի փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում մարդկանց աշխարհընկալման, կողմնորոշումների, զգացմունքների և վարքի վրա: Մարդիկ, չհասկանալով նոր և անծանոթ ուժերի էությունը, ընկնում են սոցիալականից հրաժարվելու և փախուստի ոլորտ: Վերջինս հենց կարոտախտի տաք և հարազատ ոլորտն է: Անորոշության և անկանխատեսելիության զգացումը, սպանելով ապագայի նկատմամբ մարդկանց սպասումները, հույսն ու հավատը, վերջիններիս հայացքն ուղղում է դեպի անցյալը՝ որպես իրականության նկատմամբ բողոքի միակ հնարավոր դրսևորում: Մարդիկ պարտադրված են լինում վերանայելու իրենց արժեքային համակարգը, կոլեկտիվ և անհատական ինքնությունը: Արժեքների ճգնաժամի և անընդհատ փոփոխականության ու շարժունության պայմաններում մոլորված մարդը իր հարցերի պատասխանը սկսում է փնտրել անցյալում:

Այս ճանապարհով հետսոցիալիստական երկրներում հասարակության մեջ ձևավորվում է հպարտության մի յուրահատուկ զգացում նախկինում ունեցած հզորության և ձեռքբերումների նկատմամբ: Օրինակ՝ ֆաշիզմի նկատմամբ տարած հաղթանակը, գիտության, տիեզերագնացության, սպորտի, արվեստի ու գրականության և այլ ոլորտներում ունեցած հաջողությունները: Հպարտության այդ զգացումը ևս խորհրդային կարգերի նկատմամբ տածած կարոտախտի արտահայտություն է: Վերջին հանգամանքն այսօր լայնորեն օգտագործում են հետխորհրդային պետությունները՝ բնակչության մշակութային նույնականությունն ապահովելու և քարոզելու նպատակով: Օրինակ՝ հետսոցիալիստական Գերմանիայում ճանապարհատրանսպորտային նշանների (ինչպես նաև բազմաթիվ այլ արտադրանքների) վրա պատկերված է սոցիալիստական Գերմանիայի խորհրդանիշ հանդիսացող փոքրիկ մարդու կերպարը, որին գերմանացիներն անվանում են Ամպելման: Ամպելմանը Հյուսիսային Գերմանիայի բնակչության համար այսօր անցած պատմական ուղու և մշակութային ընդհանրականության խորհրդանիշ է: Ռուսաստանի իշխանությունները նաև այդ նպատակով են առանձնահատուկ հանդիսավորությամբ նշում Հաղթանակի տոնը: Անշուշտ, նման օրինակներ կարելի է գտնել անխտիր հետսոցիալիստական բոլոր երկրներում, մյուս կողմից հետաքրքիր է, որ նույնատիպ երևույթներ հետազոտողները նկատել են նաև ժամանակակից Չինաստանում: Չինաստանը, չնայած քաղաքական տեսանկյունից սոցիալիստական պետություն է, սակայն վերջին ժամանակներում այնտեղ տեղի ունեցած տնտեսական փոփոխությունները շատ նման են հետխորհրդային անցումային երկրների փորձին: Արդյունքում, չինական մշա-

կութային ինքնությունը ևս ունի անցած, ապրված փուլ, և չինական արտադրության մեջ կարելի է նկատել այդ շրջանի նկատմամբ կարոտախտի նշանային, կերպարային արտահայտությունները: Այս առումով ամենահայտնի օրինակը, թերևս, «Warrior» սպորտային կոշիկներն են, որոնք, ժամանակին համարվելով դժվար ձեռքբերելի և երազելի, այսօրվա ավագ սերնդի չինացիների և նրանց երեխաների համար համարվում են անցյալի հուշ և մշակութային ժառանգություն, և, իհարկե, «հմուտ» չինացիները վերսկսել են դրանց լայնածավալ արտադրությունը («Huiyi-Huili» [թարգմանաբար՝ «հիշողություն»] «Warrior» անվանումով):

Կարելի է խոսել նաև կարոտախտի մեկ այլ՝ հատուկ տեսակի մասին՝ կարոտախտ հայրենաբաղձության նկատմամբ: Անցումային հասարակության պայմաններում մարդիկ հատուկ կարիք են զգում հայրենասիրական ապրումների, քանի որ դրանք ունեն հասարակությանը միավորող, նրա ընդհանրական գոյության համար հիմքեր ստեղծող նշանակություն: Այն կարող է արտահայտվել հայրենասիրությանը, ազգին նվիրված արվեստի վերածնունդով, սեփական պատմության նկատմամբ մեծ հետաքրքրության դրսևորումներով, հայրենասիրական նոր արժեքներ ստեղծելով և այլն:

Պետք է նշել, որ այս հանգամանքը օգտագործվում է և՛ կառավարության կողմից, և՛ բիզնեսի: Պետությունը, օրինակ, այն օգտագործում է ինչպես հասարակության միասնականությունն ապահովելու, այնպես էլ մարդկանց գիտակցությունը մանիպուլյացիայի ենթարկելու նպատակով, իսկ բիզնեսը, նախընտրելով ունենալ ոչ ռացիոնալ սպառող, ազդում է մարդկանց զգացմունքների վրա՝ սեփական արտադրանքը հաջողությամբ վաճառելու նպատակով: Այսօր հայկական գովազդը լցված է «վերադառնանք մեր ավանդույթներին», «սա խմել են մեր պապերը», «դարերից եկող իմաստություն», «հայոց արքաներին վայել», «մերն ուրիշ է» և նման այլ հայրենաբաղձական բացականչություններով: Միայն այն փաստը, որ տեղական արտադրանքն այսօր կոչվում է «հայրենական ապրանք», արդեն վկայում է դրա մասին:

Այսպիսով, կարոտախտի ապրումը բնորոշ է մարդուն ընդհանրապես և կարևոր նշանակություն ունի նրա կողմնորոշումների, մոտեցումների, արարքների և գնահատականների ձևավորման գործընթացում:

Լինելով քիչ ուսումնասիրված ոլորտ՝ այնուամենայնիվ որոշ հեղինակների մոտ կարելի է գտնել լուրջ հարցադրումներ այն մասին, թե կարոտախտը ինչ հնարավոր ազդեցություն ունի մարդկանց բարոյական դատողությունների և գնահատականների վրա: Վերը նշված խնդիրների առնչությամբ ժամանակակից գրականության մեջ կարելի է առանձնացնել երեք մոտեցում:

Առաջին՝ կարոտախտը չի ազդում մարդու բարոյական էությունը ձևավորելու վրա: Այս կարծիքին է ռուս հոգեբան Վ. Վ. Նուրկովան: Ըստ նրա՝ մենք հիշում և կարոտում ենք միայն այն դեպքերը, որոնք կորցրել են իրենց նշանակությունը և այլևս ներկայումս անհնարին են կիրառության համար: Այդ դեպքերի և երևույթների հիմնական հատկությունն այն է, որ վերջիններս ոչ մի առնչություն չունեն այստեղի և հիմայի հետ⁶: Այսպիսով,

⁶ Стѣи Нуркова В. В. Свершенное продолжается. М., 2000, էջ 34:

այս տեսակետի համաձայն, կարոտախտը չի պարունակում ոչ մի նշանակություն կամ արդիականություն ներկայի համար, և, հետևաբար, անցյալի ուսումնասիրությունն ընդամենը զվարճանք է ու չի ազդում մարդկանց վարքի ու բարոյականության վրա:

Երկրորդ՝ կարոտախտը բացասական, քայքայիչ ազդեցություն ունի բարոյականության վրա: Ըստ Կ. Յասպերսի՝ կան շատ օրինակներ, որոնք ապացուցում են, որ կարոտախտը հոգեկան շեղումներ և տառապանք է պարգևում այն ապրող մարդկանց: Նա օրինակ է բերում Գերմանիայում դայակություն անող օտարերկրացի կանանց կողմից երեխաներին սպանելու փաստը՝ պնդելով, որ նման արարքի պատճառը դայակների այն մտայնությունն է, որ եթե բոլոր երեխաներին վերացնեն, ապա իրենց համար այլևս աշխատանք չի մնա, և կկարողանան վերադառնալ հայրենիք: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքական կործանիչ գաղափարախոսությունների հիմքում ընկած է անցյալի ֆետիշացումը: Խոսքը, մասնավորապես և առավելապես, անցյալ դարի արհավիրքներից մեկի՝ ֆաշիստական-ազգայնամոլական գաղափարախոսության մասին է⁷:

Այս մոտեցման համաձայն՝ կարոտախտը մեկնաբանվում է կան որպես անհատական հոգեկան խանգարում, կան էլ որպես սոցիալական չարիք: Դժվար չէ նկատել, որ երկու դեպքում էլ կարոտախտը դիտվում է որպես մարդկանց բարոյական դատողությունների և արարքների վրա բացասաբար ներգործող երևույթ:

Երրորդ՝ կարոտախտը դրական, արդյունավետ ազդեցություն ունի բարոյականության վրա: Այս տեսակետն են պաշտպանում բացառապես բարոյագետները, որոնք համոզված են, որ բարոյական բարձր արժեքները մնացել են անցյալում, իսկ մարդկության զարգացումը ընթանում է բարոյական արժեքների և որակների թուլացման և հետզհետե վերացման ուղիով: Հետևաբար, ըստ նրանց՝ անցյալի վկայակոչումը հնարավորություն է տալիս պայքարելու ներկայի դեմ, վերածնելու հին ու վեհ արժեքները և պահպանելու բարոյական ցանկալի նկարագիրը: Մարդիկ հաճախ, երբ ցանկանում են դաստիարակել դիմացինին կամ դրդել նրան նախընտրելի արարքներ կատարելու, հիշատակում են երանելի նախնիներին և նրանց նկատմամբ ունեցած պարտքի մասին: Այսպես, օրինակ, վկայակոչելով դարաբաղյան ազատամարտում անհատակված հերոսներին և նրանց անձնվեր առաքելությունը հայրենիքի նկատմամբ՝ մեր իրականության մեջ դաստիարակում են հայրենասիրություն, հոգատարություն ու պարտքի զգացում ազգի և նրա ապագայի նկատմամբ:

Կարոտախտի և բարոյականության միջև դրական կապն այնքան ակնհայտ է, որ որոշ հեղինակներ պնդում են, որ առանց կարոտախտի բարոյականությունը չի կարող գոյություն ունենալ: Ի. Ժ. Սմիռնովը, օրինակ, գտնում է, որ մարդը կարողանում է անշահախնդրորեն հրաժարվել իր ունեցածից՝ ակնկալելով հայտնվել նախնիների, անցավորների, ուսուցիչների առջև⁸:

⁷ Տե՛ս Савельева И. М., Палетаева А. В. Типы знания о прошлом // Феномен прошлого. М., 2005, էջ 49:

⁸ Տե՛ս Смирнов И. П. Генезис. СПб., 2006, էջ 12:

Այսպիսով, կարոտախտի էության և դերի, բարոյական նշանակության հարցում կարծիքները, ինչպես ցույց տրվեց վերը քննարկված մոտեցումներում, խիստ տարբեր են: Մեր կարծիքով այսպիսի հակասական տեսակետների գոյությունը պայմանավորված է կարոտախտի հակասական բարոյական բնույթով: Կարոտախտն ակնհայտ ազդեցություն ունի և՛ անհատների, և՛ սոցիալական խմբերի, և՛ ողջ հասարակության կողմնորոշումների, գնահատականների ու արարքների վրա, և այդ ներգործությունը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական բարոյական հետևանք:

ЛИЛИЯ ХАЧАТРЯН – *Сущность ностальгии и ее воздействие на нравственные ориентации человека.* – В статье рассматривается проблема сущности и этического смысла ностальгии. В современном мире, когда текущая жизнь сопряжена с массой трудностей, а будущее неопределённо, человек обретает покой и стабильность в прошлом. Сегодня ностальгические переживания проявляются во всех сферах его деятельности и влияют на его моральные суждения и оценки. Анализируя проблему и, в частности, три основные концепции о связи ностальгии с моралью, статья выявляет противоречивый нравственный смысл ностальгических переживаний.

LILIA KHACHATRYAN – *The Essence of Nostalgia and its Impact on Person's Moral Orientations.* – The paper considers the problem of the nature and ethical sense of nostalgia. In the contemporary world, when the present is related to lots of difficulties, and the future is uncertain, people find peace and stability in the past. Today, nostalgic feelings can be found in all spheres of human activities, and influence on people's moral judgments and estimates. The analysis of the problem and consideration of three basic concepts of relationship between nostalgia and morality, make the controversial moral nature of nostalgic feelings obvious.